ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԳՐԱՖԻԿԱ
AutoCAD 2d

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Դասընթացի նպատակն է՝ մասնակցին տալ հիմնարար գիտելիքներ AutoCAD ծրագրային փաթեթում դիզայներական նախագծեր և շինարարական փաստաթղթեր կազմելու համար:

Դասընթացի խնդիրներն են՝ սովորողի մոտ ձևավորել.

- ծրագրի հետ աշխատելու ընդհանուր հիմունքներ,
- հիմնական հրամանների կատարումը,
- էսքիզային փուլից մինչև շինարարական փաստաթղթերի և աշխատանքային, գծագրերի կազմում, նախագծերի ձևավորում,
- նախագծային աշխատանքներն ըստ փուլերի կատարելու կարողություն:

Դասընթացում դիտարկվում են գրաֆիկական միջավայրում AutoCAD ծրագրի աշխատանքի սկզբունքները և հիմնական դրույթները, պարզ երկրաչափական պատկերների ստեղծում և ձևափոխում, ծանոթություն գծագրի ճշգրտությունը ապահովող գործիքներին, գծագրերի չափագրում և տպագրում:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՏԻԿ ԾՐԱԳԻՐԸ

1. Չափման միավորներ: Գծի կառուցման տեսակները; Կետերի առաջադրման կառչման ռեժիմներ:
2. Հարթ պրիմիտիվներ և դրանց կառուցման հրամանները (շրջանագիծ, բազմանկյուն, ճառագայթ, էլիպս) Կետերի առաջադրման կառչման ռեժիմներ:
3. Հարթ պատկերների խմբագրում
4. Տեքստ, տեքստի խմբագրում: Տեքստային ոճի ստեղծում:
5. Գծագրի կազմավորման միջոցներ (գծի տեսակ, հաստություն, գույն, գծի տեսակի փոփոխումը):
6. Գծապատում:
7. Բլոկներ (բլոկների ստեղծում, պահպանում, խմբագրում):
8. Չափագրում:
9. Պատկերների երկրաչափական պարամետրների որոշում:
10. Ռաստրային ֆայլերի ներմուծում և խմբագրում:
11. Ընտրություն, ընտրման արագ տարբերակներ:
12. Գծագրերի դուրս բերումը թղթի վրա:

Դասընթացը կանցկացնեն համալսարանի գծագրության և համակարգչային գրաֆիկայի ամբիոնի դասախոսներ Գ.Սարգսյանը և Ա.Գրիգորյանը:

Տևողությունը 36 ժամ՝ շաբաթական 3 պարապունք 2 ժամով:

Արժեքը՝ 60000 ՀՀ դրամ: